

02/10.1/23795-17 2017-10-26

AJV-45-27 2017-10-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-133-23.09.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1223 -Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-133-23.09.2017-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ օրենք) լրացնել քաղաքացու անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի հիման վրա տարիքի ստուգման վերաբերյալ դրույթով, քաղաքացու կողմից խաղասրահ կատարվող իր այցելությունները սահմանափակելու կարգը սահմանող 7.1-ին հոդվածով, համաձայն որի խաղասրահ կատարվող իր այցելությունները սահմանափակել ցանկացող քաղաքացին կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր խաղասրահներ իր մուտքն արգելելու վերաբերյալ դիմում ներկայացնել լիազոր մարմին՝ նշելով որոշակի ժամկետ, որը չի կարող 6 ամսվանից պակաս լինել: Դիմումում նշված ժամկետի ընթացքում դիմողն այն չի կարող հետ վերցնել: Նախագիծին կից ներկայացված հիմնավորման մեջ առաջարկվող կարգավորումը հիմնավորվում է այն քաղաքացիների շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ, ովքեր թեև սահմանափակ գործունակ չեն ճանաչվել, սակայն, օրինակ, ալկոհոլի ազդեցությամբ կորցնելով ինքնաստիրապետումը՝ հաճախում են խաղատուն, բայց դա չեն անում սթաի վիճակում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է խմբագրել ներկայացված օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով ստորև նշված մոտեցումները՝

1. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ շահումով խաղերի, խաղատների գործունեության կազմակերպիչն արգելում է քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղասրահ: Վերոգրյալից հետևում է, որ օրենքով կազմակերպիչների վրա AJV-45-27_2017-10-26_02d10.1d23795-17_2017-10-26_57C218

արդեն իսկ դրված է պարտականություն՝ 21 տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղասրահ արգելելու վերաբերյալ: Միննույն ժամանակ՝

1) օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով նախատեսված պարտականության չկատարման համար, որպես պատասխանատվության միջոց, նախատեսված է տուգանք՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ երկու հարյուր հազար դրամի չափով.

2) կազմակերպչի կողմից վերոնշյալ պարտականության կատարման կարգը սահմանվում է կազմակերպչի կողմից ներկայացվող և լիազոր մարմնի կողմից հաստատվող կանոնակարգերում և այդ պարտականությունը չկատարելու հետևանքով առաջացող անբարենպաստ հետևանքների ռիսկը կրում է կազմակերպիչը:

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված կարգավորումից հետևում է, որ շահումով խաղերի, խաղատների գործունեության կազմակերպիչն ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթուղթը, որ այդ կերպ պարզի վերջինիս՝ 21 տարին լրացած լինելու հանգամանքը:

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչության կողմից իրականացվող վիճակախաղերի, շահումով խաղերի և խաղատների լիցենզավորման պայմանների ու պահանջների կատարման ստուգաթերթերը հաստատելու մասին» N 18-Ն որոշման N 2 հավելվածի հարցաշարում, ի թիվս ստուգման ենթակա այլ հարցերի, ներառված է նաև մինչև 21 տարին լրացած անձանց խաղասրահ մուտք գործելու հարցը:

Գործող իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ արդեն իսկ կարգավորված են ինչպես մինչև 21 տարեկան անձանց խաղասրահ մուտք գործելը արգելելու հարաբերությունները, այնպես էլ կազմակերպչի կողմից այդ պարտականությունը չկատարելու

դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելու հարբերությունները և լիազորված մարմնի կողմից կազմակերպչի թույլ տված հնարավոր խախտումները բացահայտելու մեխանիզմները:

Ուստի, ելնելով նախագծի 1-ին հոդվածով սահմանված կարգավորման բովանդակությունից և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները, գտնում ենք, որ այն հասարակական հարբերությունները, որոնք փորձ է արվում կարգավորել նախագծի 1-ին հոդվածով՝ արդեն իսկ կարգավորված են այլ իրավական ակտերով: Այնուամենայնիվ, կիսելով հեղինակների մտահոգությունը, գտնում ենք, որ կարելի է օրենքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանել խաղատուն մուտք գործելիս անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պահանջ:

2. Գտնում ենք, նաև, որ նախագծի 2-րդ հոդվածով լրացվող օրենքի 7.1-ին հոդվածով առաջարկվող քաղաքացու՝ խաղասրահ կատարվող իր այցելությունները սահմանափակելու իրավակարգավորումը հակասում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության հիմնադրույթներին: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 24-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու գործունակությունը՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու ունակությունը ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը չեն կարող սահմանափակվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Քաղաքացու իրավունակությունից կամ գործունակությունից լրիվ կամ մասնակի հրաժարվելուն և նրա իրավունակության ու գործունակության սահմանափակմանն ուղղված գործարքներն առոչինչ են: Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր

ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Վերոշարադրյալ նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սահմանել է քաղաքացու իրավասությունների տարր հանդիսացող գործունակության սահմանափակման հստակ հիմքեր և կարգ: Այդ հիմքերն են՝ ոգելից խմիչքի կամ թմրամիջոցների չարաշահումը կամ մոլեխաղերով հրապուրվելը: Ընդ որում, գործունակության սահմանափակման համար նշված հիմքերի առկայությունն ինքնին, բավարար չէ: Քաղաքացու գործունակության սահմանափակման համար անհրաժեշտ է, որպեսզի նման չարաշահման հետևանքով քաղաքացու ընտանիքը հայտնվի նյութական ծանր դրության մեջ: Ավելին, օրենսդիրն ամրագրել է, որ անձի գործունակությունը կարող է սահմանափակվել միայն դատական կարգով: Մինչդեռ նախագծով նախատեսվում է սահմանել քաղաքացու կողմից խաղաարահ կատարվող իր այցելությունները լիազոր մարմնին դիմում ներկայացնելու միջոցով ինքնասահմանափակելու վերաբերյալ կարգավորում, ինչը չի բխում քաղաքացու գործունակությունը բացառապես դատական կարգով սահմանափակելու օրենսդրական պահանջից, ուստի օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով խաղատներ սեփական մուտքը, հետևաբար՝ խաղատներում գործարքների կնքումն արգելելու կապակցությամբ անձի կամահայտնությունը՝ որպես գործունակության սահմանափակմանն ուղղված գործարք, պետք է համարվի առոչինչ: Այս նորմի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացին չի կարող կնքել այնպիսի գործարք, որն ուղղված է իր գործունակության սահմանափակմանը:

Գործարքի հասկացությունը տրված է օրենսգրքի 289-րդ հոդվածում, համաձայն որի՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն: Այսինքն՝ օրենսգրքի 289-րդ հոդվածի իմաստով՝ քաղաքացու դի-

մումը լիազոր մարմին, որով կսահմանափակի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր խաղասրահներ մուտք գործելու իր իրավունքը, համարվում է գործարք, ինչն օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով առոչինչ է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այն դրույթը, որի համաձայն օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին, գտնում ենք, որ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված քաղաքացու ինքնասահմանափակման դրույթը, օրենսգրքին հակասելու պատճառով, չի կարող ստանալ օրենքի ուժ:

3. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող օրենքի 7.2-րդ հոդվածի վերաբերյալ բովանդակային առումով առարկություններ չունենք, սակայն, հաշվի առնելով նախորդ դիտողությունը, առաջարկում ենք նախագծի ամբողջ տեքստից հանել 7.1-ին հոդվածին կատարված հղումը և համապատասխանաբար խմբագրել հոդվածի համարակալումը:

Այդուհանդերձ նախագծի՝

1) բովանդակությունից հետևում է, որ քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելուց և լիազոր մարմնի կողմից կազմակերպիչներին տեղեկացնելուց հետո վերջիններիս մոտ առաջանում է նոր պարտականություն՝ մոլելիսադրելով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձանց մուտքը խաղասրահ արգելելու վերաբերյալ:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը

հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո: Ուստի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը չի կարող պակաս լինել 6 ամսվանից.

2) 2-րդ հոդվածով օրենքում լրացվող 7.2-րդ հոդվածով սահմանված նորմերն անհրաժեշտ է նախատեսել օրենքի 6-րդ հոդվածում, քանի որ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների գործունեության կազմակերպմանը ներկայացվող պահանջները ներառված են վերը նշված հոդվածում:

Նախագծի ընդունման դեպքում կառաջանա խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթն ստուգելու կարգը սահմանելու մասին, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր խաղասրահներ իր մուտքն արգելելու վերաբերյալ լիազոր մարմին ներկայացվող դիմումի ձևը սահմանելու մասին և խաղասրահ մուտք գործելու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանելու մասին որոշումների ընդունման անհրաժեշտություն:

Պ-133-23.09.2017-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ՀՕ-1-Ն «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր դ¹ կետով.

«դ¹) լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը, որը պարունակում է տվյալներ նրա տարիքի վերաբերյալ. »:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.1-ին եւ 7.2-րդ հոդվածներով.

«Հոդված 7.1. Քաղաքացու կողմից խաղասրահ կադարվող իր այցելությունները սահմանափակելու կարգը

Խաղասրահ կատարվող իր այցելությունները սահմանափակել ցանկացող քաղաքացին կարող է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր խաղասրահներ իր մուտքն արգելելու վերաբերյալ դիմում ներկայացնել լիազոր մարմին՝ նշելով որոշակի ժամկետ, որը չի կարող 6 ամսից պակաս լինել: Դիմումում նշված ժամկետի ընթացքում դիմողն այն չի կարող հետ վերցնել:

Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում դիմումի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կազմակերպիչներին՝ նրանց ուղարկելով դիմումի էլեկտրոնային կամ պատճենահանված օրինակները: Դիմումում նշված ժամկետի ողջ ընթացքում կազմակերպիչները պարտավոր են արգելել դիմումատուի մուտքն իրենց խաղասրահներ:

Դիմումի ձեւը սահմանում է լիազոր մարմինը:

Հոդված 7.2. Մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու՝ խաղասրահ կադարվող այցելությունները սահմանափակելու կարգը

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը սահմանափակվելու դեպքում վճիռ կայացրած դատարանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում վճիռն օրինակն ուղարկում է լիազոր մարմին: Լիազոր մարմինը սույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպիչներին, որպեսզի նրանք արգելեն օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքն իրենց խաղասրահներ:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանի կողմից քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացվելու դեպքում դատարանի վճիռն ուղարկվում է լիազոր մարմին սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

3. Սույն օրենքի 7.1-ին հոդվածով եւ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով խաղասրահ մուտք գործելու իրավունք չունեցող անձանց կողմից խաղասրահում կնքած գործարքները շահագրգիռ անձանց պահանջով դատարանը կարող է անվավեր ճանաչել:

4. Սույն օրենքի 7.1-ին հոդվածով եւ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով խաղասրահ մուտք գործելու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր p^2 կետով.

« p^2) խախտել է սույն օրենքի 7.1-ին հոդվածով կամ 7.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ երեք հարյուր հազար դրամի չափով.»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՄ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացիների մուտքը խաղատուն արգելելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև նախագծի ընդունմամբ տրվում է սեփական նախաձեռնությամբ խաղատներ կատարվող այցելությունները սահմանափակելու հնարավորություն:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. Կարգավորման հիմնական նպատակը մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իրեն և իր ընտանիքին նյութական ծանր վիճակի հասցրած անձի՝ հետագայում նման գործողություններ կատարելու հնարավորությունն օրինական կարգով սահմանափակելն է: Խոսքն առաջին հերթին այն անձանց մասին է, ովքեր արդեն իսկ դատական կարգով սահմանափակ գործունակ են ճանաչվել վերոնշյալ հիմքերով: Մյուս կողմից, բազմաթիվ քաղաքացիներ, ովքեր թեև սահմանափակ գործունակ չեն ճանաչվել, սակայն, օրինակ, ակոհոլի ազդեցությամբ կորցնելով ինքնատիրապետումը հաճախում են խաղատուն, բայց դա չեն անում սթափ վիճակում, կարող են նախագծի 1-ին հոդվածով սահմանված կարգով դիմում ներկայացնել շահումով խաղերի, խաղատան գործունեության լիցենզավորում և վերահսկողություն իրականացնող մարմնին՝ այդպիսով արգելափակելով սեփական մուտքը խաղատներ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի՝ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու՝ առանց հոգաբարձուի համաձայնության կնքած՝ գույքի տնօրինման գործարքը դատարանը կարող է հոգաբարձուի հայցով անվավեր ճանաչել: Սակայն ինչու՞ թույլ տալ, որպեսզի գործը հասնի դատարան, ինչն իր հետ անխուսափելիորեն բերում է ժամանակի և դատական ռեսուրսի վատնում, դատական ծախսեր, եթե հնարավոր է խնդիրը լուծել կարճ և արդյունավետ եղանակով:

Ինչ վերաբերում է քաղաքացու կողմից խաղատներ կատարվող իր այցելությունները սահմանափակելու դեպքին, դա ընդունված պրակտիկա է Միացյալ Նահանգներում («Self-Exclusion Program» - մասնավորապես՝ Փենսիլվանիա, Միսսուրի, Օհայո, Իլլինոիս, Նյու Ջերսի, Միչիգան և այլն), Կանադայում (մասնավորապես՝ Քեբեքում, որտեղ ծրագիրն իրականացնողներն առաջնորդվում են «Խաղը պետք է մնա խաղ» սկզբունքով, իսկ երևոյթն անվանել են էքսցեսիվ մոլեխաղ), Սինգապուրում, Ֆրանսիայում, Էստոնիայում, Բելառուսում և այլուր, որտեղ էլ իր բացառապես դրական արդյունքներն է տվել:

Ճանաչման համար կարող են կիրառվել մի քանի տարբերակներ, որոնցից տվյալ դեպքում առավել պրակտիկը հետևյալն է. համաձայն «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի (դ) կետի՝ կազմակերպիչն արգելում է քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց մուտքը խաղատարահ, ինչն ինքնին նշանակում է, որ խաղատարահ մուտք գործելիս անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնել; այսպիսով՝ ստուգելով խաղատուն մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի տարիքը, ստուգվում է նաև, թե նա կա արդյոք այն անձանց ցուցակում, ում մուտքը խաղատուն վերոնշյալ հիմքերով պետք է արգելվի:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է սահմանել, որ մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում նրա մուտքը խաղատուն արգելվի, սահմանվում է այդ նորմի կիրառման կարգը, ինչպես նաև հնարավորություն, որպեսզի անգամ եթե անձը նշված հիմքով սահմանափակ գործունակ չի ճանաչվել, նա անձամբ ներկայացնի դիմում իր իսկ մուտքը խաղատուն արգելելու վերաբերյալ:

